Վհա այսու ամենայնիւ պարտաւորիմք չտալ տեղի յանձինս մեր աշխարհասիրութեան և փառասիրութեան . անձնասիրութեան և արծաթսիրուեն .
որով փոխանակ ածսիրութեամք բարեկամ աստուծոյ հանդիսանալոյ . աշխարհասիրական հոգւով թշնամիտ առաւծոյ և ատելի իսկապէս լինիմք, որպէս գրէ սրբազն առաքեալն յակոբոս . « Նացողք՝ ոչ գիտէք՝ զի սէր աշխարհիս այսորիկ թշնամութիւն է առ աստուած . զի որ ոք կամիցի սիրել զաշխարհ թշնամիտ առնէ զանձն իւր աստուծոյ, . դ . 4 :

Վըդ՝ զինչ արացուք եղարք, զի զՃշմարիտ ածսիրութեան զօրութիւնս և ներգործութիւնս ստացուք յանձինս մեր ահա երկնաւոր վարդապէտն մեր և փրկիչն յիսուս քրիստոս ուսուցանէմեղ . « Որ ունի զպատուիրանս իմ, և պահէ զնա, նա է՝ որ սիրէ զիս : Աւ որ սիրեն զիս, սիրեսցի ՚ի հօրէ իմմէ : Աւ ես սիրեցից զնա, և երևեցուցից նմա զիս, . ՀՅՕՀ . ԺԴ . 21 :

Աթէ զբանս օրինաց և պատուիրանաց ածային պատգամաց կատարել փութասցուք յայնժամ պարտաւորիմք համարձակել և ըստ հոգենուագմարգարէին դաւթի կարեմք սրտի մոօք աղաղակել . « Օ անօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի . և թէ, զմեղս ատեցի և անարգեցի . և զօրէնս քո

Թիրեցին . Ալաղ . ԶՃՀ . 114 . 163:

Եթէ կամիմք զածսիրութեան մեր բազմաւտեսակ հոգեպարար քաղցրութիւն վայելել , ունկնդիր լիցուք նախահայրապետին մերոյ և լուսաւորչին սրբոյն գրիգորի . «Ո՞ւր սուրբ մայր է առողջութեան , անարատութեան , անբժութեան . որի խնամէ և յորդորէ յառաքինութիւն և յարդարէ յամենայն բարեգործութիւնս : Ո՞ւր աղքիւր է ամբ բարեաց . որ արբուցանէ զսուրբ անձինս , և գրաւական ամենայն երանութեանցն և մեծութեան պարգևացն աստուծոյ բաշխող : Ո՞ւր՝ բղխումն երախտեացն քրիստոսի , և վայելեցուցիչ յանապատում շնորհօ նորա , լուծիչ խովզուե և տուիչ խաղաղութեան , լուսաւորիչ մտաց և անդամոց : Ո՞ւր սուրբ հոգւոյ և մարմնոյ անեղծ ստացուածէ որք ունին զնա միշտ . և կենդանի շնորհք ՚ի քա , ամենաշահ երանութեամբք յարդարեալ ՚ի գովեստիառաց ՚ոյ : Ո՞ւր աւետիք կենդանի յուսոյն , սփափիչ է նեղութեան և վշտաց , և լուծիչ ամենայն գժնդակութեանց ՚ի վերայ եկելոց՝ որ զինուորին ընդդէմ առաքինութեան հանդիսից : Ո՞ւր սուրբ երախտեօքն հրեշտակ է խաղաղաբար , որ ղցասումն մերժէ և զիսովութիւն լուծանէ , և զնախանճ արտաքս մղէ , և ցածուցանէ զչար : Ո՞ւր սուրբ սյգի վայելուչ , որ խաղաղուղ և զինեաւ զուարթացուցանէ զսիրոտ և զգայարանմն ՚ի տրտմականացն եկամտից , և ուրախ առնէ ՚ի կամն տեառն : Ո՞ւր ՚ոք

Ճիթենի պտղալից է ՚ի սրտի բարեխոհին մզելով
 զձեթ ՚ի լուսաւորութիւն խմանալեացն , և յօծու-
 մըն , և երևելի անդամոցն զուարթութիւն . Այս ոք՝
 հոգեոր կարգաց յարդարիչ է , և մարմնաւոր վա-
 րուց յանձանձիչ , որ ՚ի միասին կապէ , և ոչ տայ
 բաժանել և քայքայել զհասարակաց բարին : Այս
 սուրբ՝ բանալի է դրան կենաց , որ զկեանս բաշխէ
 և աներեւոյթ շնորհացն այ գանձուցն բաշխող ՚ի
 սուրբ անձինս և դժնդակ վարուց խափանիչ և
 ընդդիմամարտ մեղաց : Օ ի ամենայն արուեստք ա-
 ռաքինութեան՝ սիրով յարդարին սրբութիւն , ար-
 դարութիւն : Առ նովաւ ցուցանեն զհանդէս լա-
 ւութեան իւրեանց , որ է վարիչ չարի և յորդո-
 ւիչ բարույ , զօրավիզն ածասիրաց , և կործանիչ
 խորամանկաց և մեղսասիրաց : Առ խառնեալ սուրբ
 սէր ընդ հաւատոյ և ընդ յուսոյ հանդիսանայ ՚ի
 բարեպաշտութեան վարս , և միմեանց խաղաղութն
 յայտնի առնեն զլուսաւոր կարգս : Օ ի պատճառոք
 առաքինութեամբքն լուսատու թագօքն պսակես-
 ցին յանուշակ յերկնաւոր հօրն խնամնն , և վայե-
 լեսցեն յանվախճան և յանպատում բարութիւնս
 նորա : Օ ի որ ունի զիսնամն սիրոյն սրբութեան
 առ ամենեսեան հեռաւորս և մերձաւորս , առ հօ-
 գիս և մարմինս , ամենայն Ճշմարտութեամբ , երա-
 նութեամբք սուրբ սիրոյն , յամենասուրբ երբոր-
 դուրթենին օրհնեալք պսակին և մեծարին , և մըշ-
 տնջենաւոր խնդութեամբք վայելեն յանվախճան
 և յանհամեմատ բարուիսն . . Համախ . Ճառ . Ժո

Գ Ա Յ Ա Խ Խ Ե :

Վատիցուք այսուհետեւ՝ ՚ի տեսութիւն սրբաւրար խորհրդոյ մկրտութեան, զոր տէրն մեր յիսուսքրիստոս սահմանեաց սրբաղնասուրբ անձամբ իւրով երբ խոնարհեցաւ՝ ՚ի ջուր անդ յորդանան գետոյն և յանձն էառ մկրտիլ՝ ՚ի ծառայէն իւրմէ:
 «Ճայնժամ՝ գայ յիսուս՝ ՚ի գալիլեէ է՝ ՚ի յորդանան առ Հովհաննէս՝ մկրտիլ՝ ՚ի նմանէ։ Լու յովհաննէս արգելու զնա՝ և ասէ, ինձ պիտոյ է՝ ՚ի քէն մկրտիլ և դու առիս գաս։ Պատասխանի ետ յիսուս, և ասէ ցնա։ Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է
 մեզ ընուլ զամենայն արդարութիւն։ և ապա թոյլ ետ նմա։ Լու իբրև մկրտեցաւ յու ել վաղվաղակի ՚ի ջրոյ անտի, և ահա բացան նմա երկինք, և ետես զհոգին այ՝ զի իջանէր իբրև զաղաւնի, և գայր ՚ի վերայ նորա։ Լու ահա ճայն յերկնից՝ որ ասէր, դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ։ Վատ։ դ.
 13—17։ Վարկ. առ 9։ ¹ ուկ. դ. 21։

Ահա այս սրբարար խորհուրդն մկրտութեան բազմատեսակ շնորհս ներգործէ՝ ՚ի հոգիս մկրտելոց յորոց առաջինն է որ բանայ զդուռն կենաց և փառաց արքայութեանն երկնից, վասնորոյ վճռաւրար աւետարանեաց յիսուս վրկիչ մեր Աթեղիւմոս անուն իշխանին հրէից։ «Ճամէն ամէն ասեմ քեզ՝ եթէ ոք ոչ ծնցի ՚ի ջրոյ և ՚ի հոգւոյ, ոչ կա-

րէ մտանել յարքայութիւն Երկնից։ . ՀՅՕՀ. Շ. 5:

Խսկ յորժամ ծագեաց Տէրն մեր յիսուս քն
արեգակն արդարութեան և փրկիչ աշխարհի, կա-
տարեաց և Ելից զառաջին օրինակն պակասութեան,
զի Եբաց վնոր շնորհաց զկենաց զորունս ՚ի ձեռն
աւազանին լուսաւորութեան ուղիղ հաւատով
յամենասուրբ Երրորդութիւնն, . սբն Գրի. լու.
յաճախա. Ճառ. Ժկ :

Խսյն միտս գրէ սբն Խիւրեղ Երուսաղեմայ
հայրապետն նորահաւատից ՚ի մկրտուի եկելոց.
ԱՔանզի կրկին է մարդն, յոգոյ և ՚ի շնչյ կար-
գեալ . վասն այսորիկ և սրբօղն պիտի, զի որ մար-
մին է, անմարմնովն, և որ մարմնաւորէ՝ մարմնովն
Այդ ջուրն սրբէ զմարմինն, և հոգին դրոշմէ զհո-
գիմ, զի ցողեալք ՚ի սիրտս և լուացելք զմարմինն
ջրով սրբով, մատչիլ և յանդիման լինել առաջի մե-
ծուե ածուեն կարասցուք : Այդ յորժամ իջա-
նիցես ՚ի ջուր անդր, մի իբրև ՚ի թեթև ՚ի դա-
տարկ ջուր ինչ հայիցես, այլ ՚ի զօրութենէ հոգ-
ոյն անտի փրկուեն սպասեսջիր, զի առանց Երկո-
ցունց անհնարէ քեզ կատարել լինիլ, ոչ ես ա-
սեմ զայս, այլ տը յու ինքնին, որ իրացն իշխանուի
ունի, ասէ այսպէս . Ալ, թէ ոք ոչ ծնցի ՚ի ջրոյ
և ՚ի հոգոյ՝ ոչ կարասցէ մտանել յարքայուի այ:
Աւ ոչ ոք իբրև թէ ջրով ոք մկրտեալ լիցի՝ ար-
ժանի է կատարեալ ունել զշնորհմն, և ոչ ոք որ
թէպէտ և կարի պիտանի ոք իցէ գործովք՝ և չի-

ցե առեալ ՚ի ջրոյն զորոշմն և կարիցէ մտանել
յարքայութիւնն այ . կոչ . ընծա . բան գ :

Արքարար մկրտութիւն տե՛ս զորպիսի գերագոյն
շնորհս պարգևէ մեզ . վասն զի հաղորդս կացու-
ցանէ զմեզ փրկարար զօրութեան և գործոց կա-
մաւոր մահուան կենարարին մերոյ յահ քսի , ուրե-
մըն որպէս մահն քրիստոսի սպան զզօրուին սկզբնա-
կան մեղաց մերոց , նոյնպէս մկրտութեան խորհուր-
դըն սպանանէ զմեղաց ներգործուին որ ՚ի մեզ ,
և երիցս ընկղմամբ ՚ի ջուրն աւազանին զերեք-
օրեայ թաղումն քսի նշանակէ , և յելանելն յաւա-
զանէն զօրինակ յարութեան նորին ցուցանէ , ոպ-
վեայուիքս զայս ամենայն յայտ առնեն . «Եթէ ոչ
գիտէք՝ զի որք միանգամ մկրտեցաք ՚ի քրիստոս յա-
՚ի մահ անդր նորա մկրտեցաք , թաղեցաք ընդ նմին
մկրտութն ՚ի մահ , զի ոպ յարեւ քս ՚ի մեռելոց
փառօք հօր , նոյնպէս և մեք ՚ի նորոգումն կենաց
շրջեցուք : Օի Եթէ տնկակից եղաք նմանուե մահու-
նը , այլև յարուե նորա լինիցիմք » . Հոռվ . զ . 3 . 4 .
5 : «Վաճ է մկրտուին , որ ինչ էր քսի խաճն և գե-
րեզմանն այնէ և մեզ մկրտութիւնն , նա մարմեռվ
մեռաւ և թաղեցաւ , մեք մեռանիմք և թաղիմք
մեղաց » . Առլըն Յօհ . ոսկե . Ճառ . ժ :

«Արքարար մկրտեալն երիւք ՚ի ջուրն ընկղմամբք
զածպետական մահուանն և զերեքօրեայ թաղմանն
կենսատու յիսուսին բերէ զնմանուիս » . Առլը-
դիոն , ՚ի գիւտ . եկեղ . քահա . մասն . բ . գլ . բ :

«Օռօրինակ յիսուս զաշխարհական զմեղսն եկն
էառ յանձն իւր. և մեռաւ, զի զմահս սպանցէ,
և զյարութիւն հաստատեցէ յարութեամբն իւ-
րով, սոյնալէս և դու իջեալ՝ ՚ի ջուրս, իբրև գրէ
թէ. «Ձեաղեալ՝ ՚ի ջուրս անդր, որպէս նա ՚ի վիմի
անդ՝ յարիցես միւսանգամ ՚ի նորոգումն կենդա-
նուե ճեմեցել,, ոքն լիւր. ՚ի կոչ. ընծ. գլ. ՛ :

«Օէ զմկրտելսն հրաժարեցուցանեն ՚ի սատանայէ
և մեռանիլ զմեղացն մահ. զի մի՛ ևս այլ մեղօք
կայցեն ՚ի յերկրի : Օէ որպէս մեռեալն լոէ յամ
արուեստից, նոյնալէս և մկրտեալն եղիցի մեռեալ
մեղաց, և կենդանի արդարութեան զի զկերպա-
րանս քրիստոսի ՚ի շնորհացն սուրբ երրորդուե-
առնու, յայնոմ հետէ զմերինն խորհիլ ըստ Ճշմար-
տութեան աւետարանին քարոզութեան, և հաճո-
ւից անմահ թագաւորին, արդար և Ճշմարիտ և ոք
վարուք հասանիլ յօթեանս կենացն անմահից, որ
՚ի քրիստոս յիսուս : Օէ այսպէս է վերստին ծը-
նունդն հոգեւոր աւազանին, որ զախտաւոր ծնուն-
դըն վերստին ստանայ առանց ախտի շնորհօք և
մարդասիրութեամբ ամենասուրբ երրորդուեն,
որք ոչ յարենէ ասէ և ոչ ՚ի կամաց առն, այլ
յայ ծնան,, Առուրըն գրի. լուս. Յաճա. Ճառ. ք :

Ալբարար խորհուրդն մկրտուե զորդիս մարդկան
որդիք ոյ անուանէ, և տայ համարձակուի իրաւամբ
ասել. «Հայր մեր որ յերկինս ես,, Անտ. զ. 5 :

«Օէ որք հոգւովը ոյ վարին, նոքա են որդիք

աստուծոյ : Օ ի ոչ առիք զհոգին ծառայութեան
միւսանգամ յերկիւղ, այլ առիք զհոգին որդե
գրութեան, որով աղաղակեմք աբբայ հայր . նոյն
ինքն հոգին վկայէ հոգւոյս մերում . Եթէ եմք որ
դիք աստուծոյ : Ա, Եթէ որդիք, ապա և ժառան
գրք . աստուծոյ, և ժառանգակիցք քնի . Հոռով .
ը . 14 . 15 : « Ա, Եթէ որպէս հաւատացաք Եթէ այն որ
բնութեամք որդի էր աստուծոյ, Եկն Եղւ շնոր
հօք որդի մարդոյ՝ ծնանելով՝ ի կուսէն, նմանա
պէս հաւատամք նովին չափով բնութեամք՝ Եթէ
և մեք որ բնութեամք որդիք եմք աղամայ ծնա
նելով՝ ի կոյս աւազանէն լինիմք շնորհօք որդիք
աստուծոյ : նմին իրի ասաց . Ալյամեցեալ ծնաւ
զմեզ բանիւն Ճշմարտութեան . . Ալուրբն սարգ .
շնորհ . Ճառ . դ . ՚ի մեկն, յակ . ու . 18 :

« Աւազանն զմեզ վերստին ծնանի՝ որդիանալ ու
ազատէ ՚ի մեղաց կենագործելով յանմահական
կեանս . . Ալուրբն խոսրով, ՚ի մեկն պատ :

« Եցսօր տրտմական և գիշերային լուծան Երկունք
ծննդեան նախամօրն, քանզի զծնեալսն մարմնով՝ ՚ի
մահ և յապականութիւն, վերստին ծնանի հոգին
յորդիս լուսոյ հօրն Երկնաւորի . . ՚ի շարակ :

Այս և սուրբ հոգին աստուած զմկրտեալսն ՚ի
կամաւոր և ՚ի փրկարար մահն քրիստոսի մաքրա
զարդէ յախտոյ սկզբնական մեղաց և շնորհիւ իւ
բով տաճարս առնէ առ ՚ի բնակիլ ՚ի նոսա . Վայ
սրբազան առաքեալն պօղոս գրէ . « Ա՛յ գիտէք Ե-

թէ տաճար էք աստուծոյ . և հոգի աստուծոյ բը
նակեալէ ՚ի ձեզ „ . լորն . գ . 41 . դ . 19 :

« Նորհեաց ձիրս , հանդերձաւորեաց քաւուիս .
զմկրտեալմն ՚ի մահն քրիստոսի ՚ի բնակութիւն իւր
մաքրազարդեաց : զոր հայր և որդի՝ և վնոյն հոգին
ներգործեաց : և ինքն է աստուած ինկեալ ամ
յամի . „ Ա , ար . Լ Շ :

« Կուք իբրու զվեմն կենդանիս շինիք տաճար հո
գեոր յանարատ քահանայութիւն մատուցանել
զհոգեոր պատարագս հաճոյս աստուծոյ ՚ի ձեռն
յնի քրիստոսի . „ ա Պետր . բ . 5 :

« Կարճեալ եթէ ոք զանարատ քահանայութիւն , և
զհոգեոր պատարագն ոչ միայն ՚ի դէմն օծեալ
քահանայիցն առնուցու , այլ և ՚ի դէմն հասարա
կաբար ամենայն ժողովրդեանն . ոչ ինչ վրիպէ ՚ի
Ճշմարտութենէ : վասն զի այս իշխանութիւն թուի
թէ ամենայն առաքինի անձին պարգևեցաւ . ինքն
լինել տաճար հոգեոր և ինքնին անարատ քահանայ՝
զհոգեորն մատուցանել պատարագ : Ո՞չ զայլ
ինչ , այլ զիւրն ոգի և զմիտս մարմնով հանդերձ
ողջակիզեալ ածային հրովս ՚ի վերայ սրբութեան
սեղանոյ սիրոյն այ : Պատարագ բանական և կենդա
նի ըստ ձայնի մարգարեին : Պատարագ աստուծոյ
ասէ հոգի խոնարհ . զսիրտ սուրբ և զհոգի բե
կեալ՝ ած ոչ առնէ անտես . . . ,

« Օ այսր հոգեոր պատարագի զմեծութիւն՝ տե
սեալ ածընկալն Պօղոս , հանդերձ պաղատանօք

աղահանջէ զնա՞ի մաքուր անձանց այսպէս ասելով·
աղաջեմ զնեզ եղբարք գթութն աստուծոյ, պատ-
րաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի, ոք
հաճոյ աստուծոյ զբանաւոր պաշտօն ձեր. „||ըն
տարգ. շնորհ. ճառ. դ. ՚ի մեկն. ո. պետր. ը. 5:

Պ. Ա. ՈՒԽ Զ.

Ի՞րդ՝ մին ՚ի խորհրդոց սուրբ եկեղեցւոյն քոի
է ապաշխարութիւնն. որով թողութիւն ներգոր-
ծական մեղաց մերոց ընդունիմք յայ, և արքայու-
թեան արժանանամք. „, Ի՞պաշխարեցէք՝ զի մերձելէ
արքայութիւն երկնից. „, մատ. դ. 2:

„Ա, թէ զմեծուք քաղցրութեան նորա, և զներե-
լով և զերկայնմտութեամքն արհամարիցես, չգի-
տիցես. զի քաղցրութիւն աստուծոյ զքեզ յապաշ-
խարութիւն ածէ. „, Ա. Ը ըստ խստութեան քում,
և ըստ անզեղջ սրտի գանձես անձին քում բար-
կութիւն յառուր բարկութեան. և յայտնութեան
արդար դատաւորութեան ոյ. „, հռով. ը. 4. 6:

Արկայնամիտ քաղցրութիւնն աստուծոյ մարդո-
սիրութեամք իւրով խրախոյտ տայ մեղաւորաց կա-
տարեալ զ ղջմամք խոստովանութեամք և ապաշ-
խարութեամք դառնալ ՚ի մեղաց և կեալ, որպէս
և գրեալ է:

Անայց քեզ յուշ լիցի՝ և ընդ միմեանս դատի-
ցուք: Իսակ դու նախ զանօրէնութիւնս քո, զի ար-

Դարասցիս . ԱԵՍԱՅ . ԽՄԴ . 26 :

Պրեալ է ՚ի գործս առաքելոց , յորժամ սրբազն առաքեալքն համարձակ քարողէին ազգին Հրէից , որք ժողովեալ էին առ ՚ի լսել զնոցին հոգեկեցոյց բանս : Աւ իբրև ազդեցան ՚ի նոսաքարոզութիւնք սրբազն առաքելոցն՝ յայնժամ զշացեալք ՚ի սիրտս իւրեանց աղաղակեցին : « Աւ լուեալ զայս՝ զշացան ՚ի սիրտս իւրեանց , և ասեն ցպետրոս , և ցայլ առաքեալսն , զի՞նչ գործեսցուք սոք եղբարք : Ի՞սկ ցնոսա Պետրոս , ապաշաւեցէք՝ և մերտեսցի իւրաքանչիւր ոք ՚ի ձենջ յանուն տեառն լիսուսի քրիստոսի ՚ի թողութիւն մեղաց , .

Պործ . Է . 37 . 38 :

Այս այս ապաշխարութիւն ունի դուռն նեղութեան և անձկութեան , բայց տանի ՚ի յաւիտենական կենաց ժառանգութիւնս . իսկ աշխարհասիրութեան և մեղսասիրութեան դուռն է արձակ համարձակ , սակայն ՚ի կորուստ յաւիտենական դատապարտութեան տանի , որպէս վճռեաց ած ժրկիչ մեր ՚ի հրամայելն այսպէս . « Ա՞տէ՛ք ընդ նեղ դուռն՝ քանզի ընդարձակ է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի ՚ի կորուստ , և բազումք են որք մտանեն ընդ նա : Վանդի անձուկ է դուռն , և նեղ ճանապարհն՝ որ տանի ՚ի կեանս . և սակաւք են՝ որք գտանեն զնան . Վատ . Է . 13 . 14 : « Ասկ աստ նեղ վասն հանդիսի ճգանցն , ըստ առաքելոյ . թէ բազում նեղութեամբ պարտ է մեզ

մտանել յայն հանգիստն , և թէ առժամայն նե
 ղութիւնս զյաճախութիւն փառացն գործէ ՚ի
 մեզ , վասնորոյ մի՛ հայիր ՚ի նեղն , այլ յայն՝ թէ
 ուր տանիցի , և մի՛ ընդ լայնն՝ թէ ուր վախճան
 ունիցի : Աւ նեղ այն ասի , զի յամենայն կողմանց
 Ճնշեցի և վտանգիցի յելս Ճանապարհին ըստ նմա-
 նութեան կամրջի , ոչ խոտորելով յաջ և ոչ յա-
 հեակ : Խսկ լայն՝ զի ՚ի Ճանապարհին արտաքս ելեալ
 յընդարձակութեան շրջի՝ մոլորեալ յուղիղ պո-
 ղոտայէն : Աւ դուռն անուանէ յիրաւի զի իբր
 ՚ի դրանց արտաքս ելանեմք ՚ի կենցաղոյս՝ թողեալ
 ՚ի տան աշխարհիս զմթերեալ ընչեց բազմուիս .
 նաև զվիշտս և զնեղութիւնս , յորում ոմանք սա-
 կաւ վշտացեալ իբր ՚ի դրան ել կենացն պատա-
 հին , և ոմանք ՚ի դուռն՝ ժամանակ ընդարձակ կե-
 նօք յօրացեալ կորստեան արժանաւորին , իմա և
 զայն , զի ընդարձակս ասէ բազումք ընթանան յա-
 ղագս հեղտութեան խաբեալք , և յառաջնորդէ
 Ճանապարհին այլ ոք այլ ուր գահավիժեալ , յո-
 րոյ կատարածն կորուստէ բազմեալ սատանայ ,
 ըստ այնմ՝ են Ճանապարհք՝ որ թուին թէ ուղիղ
 իցեն , բայց ելք նոցա հային յատակս դժոխոց :
 Խսկ ՚ի նեղն սակաւք՝ վասն դժուարուե նուրբ
 ընթացիցն , զի խաչ կայ առաջի և չարչարանք . նա-
 հատակութիւնք և վաստակք , որոյ առաջնորդ տէր
 է հաստատեալն ՚ի գլուխն՝ անմահ կենացն բաշխիչ
 և արքայութեան երկնից պարգևեիչ ... Յօհան .

ծործ . ՚ի մեկնութեան . Այատ . Է . 13 . 14 :

Պարակցեալ . քաջազէն բռնութեամբ՝ ՚ի յերկը
՚ի յերկինս տարադէմ գնացին փախստեայք . ին
քեանք ելին և մեզ ուսուցին , բազում նեղութ
մտանել յայն հանգիստ , . ՚ի շարակ :

Ի՞ն մարդասէր ոչ երբէք կամի զի մեղաւորք
յամառեալ ՚ի մեղս մատնեցին ՚ի մահ յաւխենա
կան դատապարտութեան , այլ կամի զի ամենեքեան
խոստովանութեամբ և ասլաշխարութեամբ դարձ
ին և կատարեալն նեղութեան արժանացին . վոյ
՚ի ձեռն մարդարէից առաքելոց և հոգեոր հովուաց
եկեղեցւոյն սրբոյ խրախոյս տայ ապաշխարութեան
և դառնալոյ ՚ի մեղաց :

Առացարուք՝ սրբեցարուք , ընկեցէք զչարիս ձեր
յանձանց ձերոց առաջի աչաց իմոց , դադարեցէք
՚ի չարեաց ձերոց : Առարուք զբարիս գործել ,
խնդրեցէք զիրաւոնս , փրկեցէք զզրկեալն , դատ
արարէք որբոյն , և տուք իրաւոնս այրւոյն : Խւ
եկայք խօսեցարուք ընդ միմեանս՝ ասէ տէր . և
եթէ իցեն մեղք ձեր իբրև զճանձախարիթ՝ իբրև
զճիւն սպիտակ արարից , և եթէ իցեն իբրև զոր
դան կարմիր , որպէս զասր սուրբ արարից
Ես եմ , Ես եմ ; նոյն , որ ջնջեմ զանօրէնութիւնս
քո վասն իմ , . Եսայ . առ . 16—18 :

Ալ , մի ևս ուսուցանիցեն իւրաքանչիւր զընկեր
իւր , իւրաքանչիւր զեզբայր իւր ասել՝ թէ ծանիր
զտէր , զի ամենեքեան ծանիցեն զիս ՚ի փոքրկանց

նոցա մինչև՝ ՚ի մեծամեծս, ասէ տէր. զի քաւիչ ե-
ղեց անիրաւութեանց նոցա. և զմեղս նոցա ոչ ևս
յիշեցեց. Արեմ. լս. 34:

Աւ դու որդի մարդոյ՝ ասա ցտունդ իսրայէլի,
այսպէս խօսեցարուք՝ և ասացէք, թէ մոլորուիք
մեր՝ և անօրէնութիւնք մեր ՚ի մեզ են, և մեք ՚ի
նոսին մաշխմք. և զիամրդ ապրիցուք: Լա ցնոսա
կենդանի եմ ես՝ ասէ աղօնայի տէր, ոչ կամիմ
զմահ ամբարշտին, որպէս զբառնալ ամբարշտին ՚ի
չար ճանապարհէ իւրմէ՝ և կեալ, դառնալով դար-
ձարուք ՚ի ճանապարհաց ձերոց չարաց, և ընդէլ
մեռանիք տունդ իսրայէլի. Ազեկ. լդ. 10. 11:

«Ո՛չ յամեցուսցէ տէր զաւետիսն՝ որպէս ոմանք
յամը համարին, այլ Երկայնամիտ լինի, առ ձեզ:
Վանզին ոչ կամի, եթէ ոք կորիցէ, այլ զամենե-
ցուն հասանել յապաշխարուի,, . լ. Պետր. գ. 9:
«Լա թէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւա-
տարիմ է նա. և արդար առ ՚ի թողուլ մեզ զմե-
ղսս մեր, և սրբել զմեզ յամենայն անիրաւու-
թենէ,, . ա. յօհ. ա. 9:

«Այլ արդ՝ քանզի որպէս ոչ է առանց քրիստոսի
այ ոգւոց վրկութիւն. և ոչ առանց տեսման ա-
չաց՝ առ լոյս զուարժութիւն: Աւ կամ առանց ա-
րուսելին նշուլից՝ արեւու Երբէք քաղցրութիւն,
այսպէս և ոչ առանց խոստովանութեան՝ ծած-
կութից և ըստգտանաց անձին՝ քաւութիւն,, .
նարեկ. Ճ.:

«Վանայն մեղաւորաց ապաշխարութեամբ լինի թողութիւն մեղաց համարձակութեամբ ասեմ եթէ չեք մեղք որ ապստամբին և ապստամբեսցին յապաշխարութենեն . . սըն . եփրեմ . ՚ի մեկն . աւետ . համաբար . գլ , ժ :

«Իմէ և բիւր չարեօք յառաջինսն վերաւորեալ իցեմք հաւսոասցուք ՚ի մարդասիրութենէ քրիստոսի քաւութիւն և թողութիւն մեղաց գտանել . . սըն խոսրուլ . ՚ի մեկն . ժամակարգ :

«Օ ի եթէ մեք ոչ մոռանամք զմեղս մեր , այլ ՚ի համար բերեմք միշտ՝ ած մոռանայ : Իսկ եթէ մեք մոռանամք՝ աստուած ոչ մոռանայ : Եւ զկնի այսպիսի խոստովանութեան , զսպեղանիս ապաշխարուե ՚ի վերայ դնել վերացն , և ամենայորդոր կամօք ՚ի ճգունսն փութալ , և ընդդէմ . մոլեգին ախտից , և այլոց ևս մեղաց , նշան յաղթութեան կանգնել .

Եւդ զայսպիսի խոստովանութիւն պահանջէ ՚ի մէնջ , զայսպիսի ապաշխարութիւն : Ես յորժամ ՚ի մէնջ հարկաւորին՝ կատարին , տե՛ս զինչ ասէ .

«Հաւատարիմ էնա և արդար առ ՚ի թողուզ զմեղս մեր . . սարգ . շնորհ . ճառ ը . ՚ի մեկն . ու . յօհ . 1 . 8 :

«Ո՞եք ցուցցուք ՚ի նեղութեան և յանդորրուզհանդէս մտերմութեան մերոյ առ տէրն , և նա աննուազ զիւր պարզեւոն շնորհէ զի զամենեցունց կամի զկեալն և ժառանգաւոր լինիլ անանց փառացն և մեծութեանն . որ ՚ի քրիստոս յն ՚ի տէր

մեր : իւ մեք որ նովաւ եղիաք իւրաքանչիւր վաս-
տակօք և առաքինութեամբ և սրբելք ՚ի չար ցան-
կութեանց . և առիթ լեալ բազմաց փրկութեան ,
և ճշմարտեալ վարուք փոխիլ յերկրէ յերկնաւոր
հոնդիստն , յանուշակ արքայութեանն միշտ ընդ-
քրիստոսի լեալ և ՚ի նոր երանելի բարուխն վա-
յելել : իւ որպէս անդամօք կանգնի հասակ ,
այսպէս բարի գործովք կանգնի և հաւատովք ըս-
տուգի յոյն , և յուսովն հանրեսք : իւ այնպէս
յորդորել յաստուածային սերն ընդունել զշնոր-
հըս հոգւոյն սրբոյ , և ՚ի վերապոյն լեալ երկ-
նայնոցն անմահից կենաց լեալ ժառանգորդ .
՚ի բնակարանս սրբոց ՚ի կենդանարար սերն ծալ-
կեալ գեղեցկագոյն փառօք յանձառելիսն մշտն-
ջենաւորս՝ փառաւորելով միշտ զամենասուրբ
զերբորդուխն յաւիտեանս յաւիտենից . ամէն ,
ոռւրբն Գրի . լուս . յաճախ . ճառ զ :

Ա Ե Բ Զ Ա Բ Ա Ե Ա Ե Թ Ի Խ Ե :

Կ վերջոյ բանիցո խորհրդական դրանց , որոց տե-
սութիւն ըստ կարի մեր չնորհիւ ոռւրբ հոգւոյն
ոյ յայտնեցաւ մարդարեական , աւետարանական ,
առաքելական և հայրապետական բացայայտ բա-
նիւք , որ արդարեւ պարտաւորութիւն իսկէ հո-
գեար հովուաց , եթէ բանիւ և եթէ գրով ,
եթէ առանձին և մանաւանդ եթէ ՚ի ոռւրբ

ատենի եկեղեցւոյն՝ ՚ի մէջ ժողովրդոց զբանն
կենաց քարոզել առ ՚ի ճանաչումն աստուածային
բարեխնամ կամաց և ՚ի հետեւումն ածահաճոյ ա
ռաքինական վարուց և ըստ ամի հեռի կալ ՚ի
խորհրդոց և ՚ի գործոց մոլութեանց և մոլորուեց:

Եհա զայս պարտաւորութիւն նախազեկոյց առ
նէր ածային արդարութիւն մարդարէին եղեկեայ
որպէս և զրեալ է. «Աշակ բան տեառն առիս՝ և
ասէ: Որդի մարդոյ, դէտ կացուցի զքեզ տանդ
իսրայէլի՝ լուիցես յինէն զպատգամն՝ և սպառ
նասցիս նոցա իբրու յինէն: Հորժամ ասիցեմ յա
նօրէնն, եթէ մահու մեռանիցես. և դու ոչ զգու-
շացուցանիցես նմա. և ոչ խօսեսցիս զգուշանալ ա
նօրինին. և դառնալ ՚ի ճանապարհաց իւրոց չա-
րաց՝ և կեալ, անօրէնն յանօրէնութեան իւրում
մեռցի, և զարիւն նորա ՚ի ձեռաց քոց խնդրեցից:

Խոկ եթէ դու զգուշացուցանիցես անօրինին, և
նա ոչ դարձի յանօրէնութենէ իւրմէ, և ՚ի ճա-
նապարհէ իւրմէ, անօրէնն այն յանօրէնութեան
իւրում մեռցի, և դու զանձն քո ապրեցուսցես:
Եւ յորժամ դարձի արդարն յարդարուեց իւ-
րոց՝ և արասցէ յանցանս՝ արկից տանջանս զդլիով
նորա, զորս արար: Բայց քանզի՝ դու ոչ զգուշ-
ցուցեր զնա, զարիւն նորա ՚ի ձեռաց քոց խնդրե-
ցից: Եպա թէ զգուշացուսցես զարդարն, զի մի
մեղեցէ, արդարն կելով կեցցէ. զի զգուշացուցեր
նմա. և դու զանձն քո ապրեցուսցես . . դ . 16—21 :

Յիշեսցուք աստանօր զառակն աւետարանական
 բանից կենարարին մերոց յիսուսի քրիստոսի, որով
 նմանեցուք բարի և հաւատարիմ ծառայիցն, որք
 զքանքար բանին այ յարգեցին հաւատարիմ լինե-
 լով տեառն իւրեանց . վասնորոյ գովեցան և վար-
 ձուցն արժանի եղեն : Աւ մի երբէք նմանեցուք
 այն չար և վատ ծառային, որ զպաշտօն իւր հա-
 ւատարիմն թեամբ չկամեցաւ կատարել, այլ ծու-
 լութեամբ քանքարաթաքոյց գտաւ . վասնորոյ և
 զարժանին ընկալաւ զորատիժ՝ ՚ի տեառնէն, որպէս
 և գրեալէ . Ալլովէս այր մի զնացեալ ՚ի տար աշ-
 խարհ, կոչեայ ղծառայս իւր . և ետ նոցա զինչո
 իւր : Ումեմն ետ հինգ քանքար . և ումեմն երկուս .
 ումեմն մի . իւրաքանչիւր ըստ իւրում կարի . և
 գնաց : Սոքաւ վաղվաղակի՝ որ էառ զհինդն՝ գոր-
 ծեաց նոքօք, և շահեցաւ այլես հինգ : Առյնալէս և
 որ զերկուսն, շահեցաւ այլես երկուս : Աւ որ ըշ-
 մինն էառ, փորեաց զերկիր : և թագոյց զարծաթ
 տեառն իւրոյ : Հետ բազում ժամանակի գայ տէր
 ծառայիցն այնոցիկ՝ և առնէ համարս ՚ի մէջ նո-
 ցա : Աւ մատուցեալ՝ որ զհինգ քանքարն էառ,
 մատոյց այլես հինգ քանքար՝ և ասեր : տէր, հինգ
 քանքար ետուր ցիս, արդ՝ աւասիկ հինգ այլես
 քանքար շահեցայ : Ասէ տէր իւր՝ ազնիւ ծառայ՝
 բարի և հաւատարիմ, որովհետեւ ՚ի սակաւոդ հա-
 ւատարիմ ես, ՚ի վերայ բազմաց կացուցից զքեզ .
 Բաւտ յուրախութիւն տեառն քո : Ումատուցեալ և

որոյ զերկուս քանքարս առեալէր՝ և ասէ, տէր՝
երկուս քանքարս ետուր ցիս. ահաւասիկ երկուս և
այլ քանքարս՝ զորս՝ ՚ի վերայ շահեցայ. ՚Ասէ ցնա
տէրն իւր, աղնիւ ծառայ, բարի և հաւատարիմ,
որովհետեւ՝ ՚ի սակաւուդ հաւատարիմ ես՝ ՚ի վր
բազմաց կացուցից զքեզ. մուտ յուրախութիւն
տեառն քո. Վատուցեալ և որոյ զմի քանքարն ա
ռեալ էր, և ասէ, տէր գիտէի, զի այր մի խիստ
ես, հնձես զոր ոչ սերմանեցեր. և ժողովես՝ ուստի
ոչ սփռեցեր. Լրկեայ, զնացի, և թագուցի զքան
քարն քո յերկը. արդ՝ ահաւասիկ քոյդ զքեզ.
Պատասխանի ետ տէրն՝ և ասէ ցնա. ծառայ չար և
վատ, գիտէիր եթէ հնձեմ՝ ուստի ոչ սերմանեցի,
և ժողովեմ՝ ուստի ոչ սփռեցի. պարտ էր քեզ
արկանել զարծաթդ իմ ՚ի սեղանաւորս, և եկել
ես տոկոսեօք պահանջէի զիմն. ՚Երդ՝ առէք ՚ի դը
մանէ զքանքարդ՝ և տուք այնամ՝ որ ունիցի զտա
որն քանքարն. ՚Օ ի ամենայնի, որ ունիցի, տացի և
յաւելցի, և որ ոչն ունիցի, և զոր ունիցին, բարձցի
՚ի նմանէ. ՚Եւ զծառայդ անսլի տան հանէք ՚ի խա
ւարն արտաքին. անդ եղիցի լալ՝ և կրծել ա
տամանց. . Վատ. իե. 14—30:

՚Ասոյն միւս գրէ և սրբազան առաքեալն Ալետրոս.
՚Աւրաքանչիւր ոք որակէս և ընկալաւ զշնորհս ինչ՝
՚ի միմեանս զնոյն մատակարարել, իբրև զբարւոք
հազարապետս պէսպէս շնորհացն ոյ. ՚Եթէ ոք խօ
սեսցի՝ իբրև զոյ պատգամ, եթէ ոք մատակարա.

բեսչէ՝ եթու ՚ի զօրութենէ՝ զոր շնորհէ ած, զի
յամենայնի փառաւորեսցի աստուած ՚ի ձեռն յուի
քուի. որում փառք և զօրութիւն յաւիտեանո յու-
տիտենից ամեն, . ա. Պետր. Շ. 10. 11.

Վայ ըստ սրբաղան առաքելոյն Պօղոսի՝ Եթէ
քարողեմք զբանն կենաց՝ զհոգեոր պաշտօնիս մեր
զպարտիս կատարեմք և անդատապարտ մեամք, և
զվարճս յաւիտենական փառաց ընդունիմք: Խակ ե-
թէ անհոգս լինիմք, ծուլանամք, և զկամս մեր պաշ-
տեմք սոսկալի վայն յաւիտենական դատապարտուե-
պատրաստեալ կայ մեզ:

Այ, Եթէ աւետարանեմ, ոչ ինչ են ինձ պարծանք,
քանդի հարկ ՚ի վերայ կայ, բայց վայէ ինձ, Եթէ
ոչ աւետարանեմ: Եթէ կամաւ զայն առնեմ,
վարձք են ինձ, և Եթէ ակամոյ, տնտեսութիւն
յանձնէ ինձ, . ա. Կորն. թ. 16. 17.

„Օ այս վայութիւն դնեմ առաջի այ և միսու-
սի քրիստոսի, որ դատելոց է զկենդանիս և զմե-
ռեալս, ՚ի յայտնութեան իւրում և յարքայուե. Եւ դու քարողեա զբանն հաս ՚ի վերայ ժամաւ
և տարածամու, յանդիմանեա, սաստեա, միսիթա-
լեա ամենայն երկայնմութեամք և վարդապետու-
թեամք. . . Այլ դու զուարթ կաց, յամենայնի
Ճգնեաց, զգործս աւետարանի, զործեա զպաշտօն
քո կատարեալ կալ, . Բ. Տիմոթ. Շ. 1—5.

Վշդ ուշադիր լիցուք երանելի նը վարդապե-
տին մերոյ Յովհաննու ծովծորեցւոյ, որ քաղցրա-
մօք բանիւք խրատէ զհոգեոր հովիւռ ուղղափառ

սուրբ Եկեղեցւոյն մեր նմանիլ նախահայրապէտին
 մերոյ և ըռսաւորչին սրբոյն Պարիգորի այսպէս
 գրելով. «Ի՞ւսաջնորդք Երկնաւոր Ճանապարհին և
 արածողք քսի հօտին և մեծագին գառանցն, զոր
 միածինն միայնոյ հօր՝ արեամբ և մահու ժառան-
 գեաց: ՕՀնգետասանամեայ չարչարանօք մեր լու-
 սաւորչին ստացեալն սեալհական ժողովուրդ և ձեզ
 ձրի և անգին տուեալ ՚ի ժառանգութիւն. մի՛ մո-
 լորեցուցանէք ՚ի լերինս և յանկովս Ճանապարհ:
 և մի՛ մատնէք գայլոց և գազանաց. զոր հովիւն
 քաջ՝ ՚ի վերայ յուսոյ եբարձ և ՚ի վեր տարաւ-
 յերկինս և ընդ անմոլարս խառնեաց թիւս, . 1) ուկ-
 ժե. 5: Ո՞ի լինիք նմանողք վարձկանացն ՚ի մար-
 մին սերմանողաց, և զհոգիս խաշանց բանաւորաց
 անտես առնողաց: Ո՞ի անխնամ անգութ և անայ-
 ցելու խոցելոցն վարաւորաց լինիցիք, վասն որոց քս
 զիւցումն ։ զվելու յանձն էառ, . 1) ուկ. 10. 31:
 «Կաւսատիք Եկեղեցւոյ նաւի, մի կենցաղոյս ամ-
 բոխեալ ծովու տայք զնաւ Եկեղեցւոյ յաւեկո-
 ծութիւն և ՚ի խոռվութիւն հողմոց, զի մի ընկու-
 մելով զորս յանձն առիք հանել ՚ի հեղձական ծո-
 վէ, կորուսանողք անձանց անմեղաց լինիցիք: Առք
 ածային այգւոյն բանաւոր և Երկնաւոր տնկոցն
 տնկագործ և պահապան կարգեցաք, և ՚ի պտղոյ
 այգւոյն Ճաշակէք, և ակնունիք գահեկանի վար-
 ձուն յամենաբարի տեառնէն, . Ո՞ատ. 20. մի տայք
 թոյլ գաղանին ապականել զտծային այգւոյն զքա-
 ջաւեր ուռն յութն Ճշմարիտ արմատացեալ, »


Ապդ. 70. 14. ԱՅՆԻ շարժեք զպատուար զգուշու-
թեամբ պատուիրանաց այ: ԱՅՆԻ կոխեք զէարդ կա-
նոնաց ածահատատ ու խոտին հաւատոյ: ԱՅՆԻ քակեք
զցանկ ամրութեան հայրենադիր աւանդիցն, զի մի
հարջեք յօձեն չարաթոյն և անբուժելի. Ժառ.
Ժառ. 8: ԻՇԽՆԵՔ ըանաւորք և վերակացուք հոգ-
ւոց, որք զածականն ունիք բժշկարան, մի՛ ան-
գութ և անագորով առ խածեալսն ՚ի կամակոր
օձեն՝ և ՚ի բնական և յանբնական ցաւօք պաշա-
րեալսն լինեցիք: ԱՅՆԻ ողջացուցիչք չարեաց և ոչ
փարատիչք ցաւոց: ՀՅՕԲ. ԺԳ. 4:

Վասուածայինն պօշու գրէ ձեզ և ամենայն հա-
ւատացելոյ խրատ և ասէ, յիշեցէք զառաջնորդս
ձեր, որք խասեցան ընդ ձեզ զքանն այ. և հայե-
ցեալք յելս գնացից նոցա. նմանողք եղերուք հա-
ւատոցն. ԵՐՐ. ԺԳ. 7: Այդ և դոք յիշեցէք զա-
ռաջնորդն կենաց և փրկութեան ձերոյ, և զմտա-
ածէք զանտանելի չարչարանս ածագութ հօրն և
հոգւոց լուսաւորչին և ճգնաւոր նահատակին . քի
որբոյն գրիգորի: Եւ մի՛ մոռանայք զվարմացու-
ցիչ երկնաւոր զօրացն՝ և զկիրս նորա հողանիւթ
մարմնոյն: Պատկառեցէք յայնալիսի սոսկալի նորա
խստամբեր վարուցն: Որ և այժմ զարեամբ գլո-
տանցն և զցողով մնուցեալ արտասուացն զսեր-
մանեալ հաւատոյն անդաստանի պտուղ վայելէք:
Այդ՝ հայեցարուք յելս գնացից նորա, թէ որպէս
եկաց յաշխարհի, և կամ որպիսիք եին ելք գնացից
նորա, Օք այնէ դուռն ոչխարաց հովուե. ընդ

որ նա եմուտ չարչարանօք : Այտացաւ իւր ժողովուրդ քերանօք ոսկերաց մարմնոյն, և կողիցն հոսմամբ արեան՝ շինեաց զաղգս զայս եկեղեցի ոյ : Արակէս, և տէրն իւրով կողակայլակ արեամբն զաղգս և զաշխարհ ում շրոյ տուղթմամբ խորովեցաւ ՚ի վերայ իւրոց գեղեցիկ գառանցն : Անհնարին տանջանօք կայր ՚ի կախաղանին և աղօթէր վասն իւր հաւատացել հօտին : ՚ի գուբ խաւարին և ՚ի մէջ չարաթոյն օձից կայր զամս երեքտասան, յաղագս ՚ի գուբ մեղաց և ՚ի հարուածս օձին և ՚ի մէջ թունալի ախտից մեր ընկղմելոյն : Այս է գուռն հոգեռ րական հովուել, և որ ոչ մտանէ ընդ այս գուռն, գող է և աւազակ . յօհ . 10 . 1 : Այս օրինակ՝ որով սեպհական լինի ժառանգութիւն և ոչ աղգակցուի արեանն՝ որով տիրեն քրիստոսի հօտին : Այս են պինք գառանցն քսի և ոչ ըսղմութիւն արծաթոյ, զի խոտեսցին այնոքիկ որք ընտրել են արծաթով . Արդ որ այսպէս եմուտ ընդ դուռն ոչխարաց, հայեցարուք յելս գնացից նորա և զարմացարուք :

Ո՞ի յետ ստանալոյն իւր ժողովուրդ, և յետ ՚ի քահանայապետականն բարձրանալոյ յաթոռ, հրաժարեալ յաշխարհէ, յանապատ վայրս և յանբնակը հեռանայր : օտարանայր ՚ի պատուոյս, փախստական լինէր ՚ի փառացս, աստուծոյ լինէր խօսակից, հրեշտակաց երգակցութեանց կցորդ, ընդ սրբատաց մերովքէսն սրբաբանօղ „ . սբն յօհ . ծործոր . ՚ի գովեւստ . սրբոյ հօրն մերոյ գրիգորի լուսաւորչի . ՚ի յահանա :







1441

1441

